նում և մի ամբողջութիւն են կազմում։ Ստեփանոսն ստանում է չորս պատարագ, իսկ Մարեմտուրը ութ՝ «։գ։ աւրն հաւրն ու ։գ։ աւր մաւրն եւ ։բ։ աւր Սիրիրախտին»(1)։ Անհաւանական չէ, որ ԺԲ. դարի կէսերին ապրող այս Մարեմտուրի թոռը լինի մեր շինութեան օժանդակող Սարգիսը։

Սոյն եկեղեցու արձանագրութիւնների մէջ երկու անգամ յիշատակութիւն կայ Հաւու Թառ և Ամենափրկիչ անուանակոչութեան. առաջինը պարզապէս ուխտի ընդհանուր անունն է, որ յաճախ կրկնուած կ'տեսնենք յիշատակարանների մէջ ԺԲ. դարի եօթանասնական թուականներից ըս-



Գուտանիս գ. արեւմտեան ճակատ.

Բրի եկեղեցին.

Այս բոլոր հանգամանքները ի մի կշռած, կարծում ենք, որ եկեղեցին շինուած է ԺԴ. դարի առաջին քառորդին(2)։

կլսած. արդեօ՞ք Ամենափրկիչ չէր կոչւում հէնց այս շէնքը, որով և կարելի էր կասկածի ենթարկել մեր եզրակացութիւնը նորա ծագման ժամանակի նկատմամբ։ Այսպիսի ենթադրութեան դէմ է միանգամայն քուրդ Յովհաննէսի պարզ վկայութիւնը Մագիստրոսի արձանագրութեան տեղի վերաբերմամբ. «Վերոյ գրեալ արձանս գրեալ կայր ի վերայ սուրբ Ամենափրկչին արքայաշէն

(1) Մխիթարեան Ստեփ. Վարդ. Ստորագրութիւն Այրի վանից սրբոյն Գեղարդայ. Վաղարշ. 1873. եր. 49։ Ստուգուած եւ լուսանկարուած մեր կողմից։

(2) Ճարտարապետ Թորամանեանցն եւս հաստատեց մեր կարծիքի ճշմարտութիւնը ի նկատի ունենալով քարերի դասաւորման տեխնիկան ԺԴ. դարում։